Համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարի
10.08.2021թ. N 422-Ա հրամանի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

քաղ. Երևան <<31>> հունվար 2022թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, ի դեմս ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանի (այսուհետ՝ ՀՀ ոստիկանություն), որը գործում է ՀՀ ոստիկանության կանոնադրության հիման վրա, մի կողմից և Հայաստանի <<Դինամո>> մարզական հասարակական կազմակերպությունը, ի դեմս նախագահի առաջին տեղակալ Ա.Մկրտչյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), <<**1158.11001. Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում** >> ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ոստիկանությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված գումարը՝ 24 464 200 (քսանչորս միլիոն չորս հարյուր վաթսունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի **հավելված N 1**-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ոստիկանությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ոստիկանության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. ՀՀ ոստիկանության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. ՀՀ ոստիկանությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.3.5. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը (**պայմանագրի հավելված N3**), այնուհետև, ծրագրի կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակել իր պաշտոնական՝ *www.police.am* ինտերնետային կայքէջում :

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել ՀՀ ոստիկանության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ոստիկանություն ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ոստիկանության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. ՀՀ ոստիկանության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ ՀՀ ոստիկանության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը :

2.4.10. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքներն ընդունվելուց հետո առաջացած տնտեսումները (խնայողությունները) կազմակերպությունը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ արդյունքն ընդունվելուն հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը :

3. Մոնիթորինգը

3.1. ՀՀ ոստիկանությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ոստիկանության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. ՀՀ ոստիկանությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է ՀՀ ոստիկանության և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպությունը ՀՀ ոստիկանությանն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը և դրամաշնորհային հաշվետվությունները:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ՀՀ ոստիկանությունը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա ՀՀ ոստիկանությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում ՀՀ ոստիկանությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում ՀՀ ոստիկանությունը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ոստիկանությունը կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (**հավելված N 2**) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում,բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն ՀՀ ոստիկանության կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ :

6.5 ՀՀ ոստիկանության կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, ՀՀ ոստիկանությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (**հավելված 3**):

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո ՀՀ ոստիկանությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ ՀՀ ոստիկանությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով ՀՀ ոստիկանության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը ՀՀ ոստիկանությունը հրապարակում է իր պաշտոնական՝ *www.police.am* ինտերնետային կայքէջում ՝ նշելով հրապարակման ամսաթիվը :

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը ՀՀ ոստիկանությունը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին :

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից :

9.5. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ոստիկանություն	Հայաստանի <<Դինամո>>
ք. Երևան, Նալբանդյան 130շ.	մարզական հասարակական
ՀՀ ֆինանսների նախարարության	կազմակերպություն
աշխատակազմի գործառնական	ք. Երևան,Վարդանանց 69շ.
վարչություն	Հեռ. /010/ 55-23-11
Գ/Հ 900011021947	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 01533334	Հ/Հ 1150009613143139
	ՀՎՀՀ 01503826
Վ. Մովսիսյան	Ա. Մկրտչյան
(ՀՀ ոստիկանության պետի տեղակալ)	(նախագահի առաջին տեղակալ)
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված N 3
20 22 թ. հունվարի << 31 >> -ին
կնքված N 31 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի <<Դինամո>> մարզական հասարակական կազմակերպությանը 2022թ. պետության կողմից տրամադրվող (1158.11001. Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում)

1. Բովանդակություն

<<Դինամո>> Հայկական ՍՍՀ խորհուրդը (ներկայիս Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ) հիմնադրվել է 1925թ. Հայկական ՍՍՀ ներքին գործերի ժողկոմատի մի խումբ աշխատակիցների ջանքերով՝ նպատակ հետապնդելով բարձրացնել ՀՀ ոստիկանության աշխատակիցների ֆիզիկական պատրաստականության մակարդակը, զբաղվել մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակությամբ, միաժամանակ մասնակցել սպորտի զարգացման գործին:

Ստեղծման օրից առ այսօր <<Դինամո>> ՄՀԿ հավատարիմ ծառայել է իր առջև դրված խնդիրների կատարմանը՝ տրամադրել է ՀՀ ոստիկանության աշխատակիցներին և նրանց ընտանիքի անդամներին մարզադահլիճներ, մարզական գույք և մարզչական ծառայություններ, ցույց է տվել մեթոդական և գործնական օգնություն, պատրաստել է լավագույն մարզիկների, որի արդյունքում ունեցել է մեծ սպորտի բնագավառում հսկայական հաջողություններ :

Հայաստանի <<Դինամո>> մարզական հասարակական կազմակերպությունը (կարճ Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ) շահույթ չհետապնդող, ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է իրավաբանական անձի կարգավիճակով, զբաղվում է ուսումնամարզական գործունեությամբ ու երեխաների արտադպրոցական դաստիարակությամբ : Իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան, Վարդանանց 69շ. և գործում է նույն հասցեում : Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ ունի մասնանաճյուղ ք.Գյումրիում, որը իր գործունեությունը իրականացնում է ք.Գյումրու նորակառույց ոստիկանության շենքի առաջին հարկում տեղակայված, համապատասխան մարզագույքով կահավորված մարզադահլիճներում : Նշված մարզադահլիճները, բացի մասնաճյուղի կանոնադրական խնդիրների իրականացումից, տրամադրվում են նաև ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության ծառայողներին՝ մարզումներ և ֆիզիկական պատրաստականության պարապմունքներ անցկացնելու համար :

<<Դինամո>> ՄՀԿ ունի նաև մասնանաճյուղ ք.Վանաձորում, որը իր գործունեությունը իրականացնում է տեղի մարզադպրոցներում :

Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից գրանցվել է 12.01.2006թ. գրանցման համարն է՝ 211.171.03736, վկայականի համարն է 03Ա070509 :

<<Հասարակական կազմակերպությունների մասին>> ՀՀ նոր օրենքի համաձայն կազմակերպության կանոնադրությունը 22 հունիսի 2017թ. վերագրանցվել է նոր խմբագրությամբ:

<<Դինամո>> ՄՀԿ գործունեությանը դիտարկված է անհրաժեշտ և անհետաձգելի, որի իրականացումը հնարավոր չէ իրականացնել սեփական միջոցների հաշվին:

2. Ծրագրի նպատակը

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

ա/ ՀՀ ոստիկանության ծառայողների առողջության ամրապնդման, աշխատունակության և մարտունակության բարձրացման գործընթացի ապահովում :

բ/ ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների անձնակազմի ֆիզիկական պատրաստականության, ծառայողակիրառական և զանգվածային մարզաձևերի տիրապետման հմտության բարձրացումն ու կատարելագործումը :

գ/ ՀՀ ոստիկանության աշխատակիցների և նրանց ընտանիքների անդամների ֆիզիկական պատրաստականության պարապմունքների անցկացման և առողջության ամրապնդման համար անվճար հիմունքներով մարզադահլիճների, մարզահրապարակների և մարզագույքի տրամադրումը :

դ/ ՀՀ ոստիկանության ծառայողակիրառական և զանգվածային մարզաձևերի 2022թ. սպորտային միջոցառումների անցկացման օրացուցային պլանի համաձայն՝ <<Դինամո>> ՄՀԿ-ում անցկացվող միջոցառումների համար համապատասխան կահավորանքով մասնագիտացված մարզադահլիճների,խաղադահլիճի և կոմունալ պայմանների ապահովումը :

ե/ ՀՀ ոստիկանության ծառայողների ֆիզիկական պատրաստականության պարապմունքների արդյունքներն ամփոփելու նպատակով ծառայողներից տարեվերջյան ստուգարքների ընդունման համար համապատասխան մարզադահլիճների, մարզահրապարակների, վազքուղիների և կոմունալ պայմանների ապահովումը :

3. Ծրագրի նպատակների իրականացման նկարագիր

Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ-ի կողմից պարբերաբար նորացվում է բոլոր մարզաձևերի համար անհրաժեշտ մարզագույքը՝ ըմբշամարտի գորգեր, ձյուդոյի տատամիներ, գնդակներ, սեղանի թենիսի ռակետներ, ըմբշամարտի խրտվիլակներ, ծանրաքարեր, ծանրաձողեր, մագլցման պարաններ և այլն : Արդյունքում <<Դինամո>> մարզահամալիրը մշտապես համալրված է ժամանակակից մարզական և տնտեսական գույքով,որտեղ, համաձայն ՀՀ Կառավարության 23.01.2003թ. N 174-Ն որոշման 21-րդ կետի պահանջի և ՀՀ ոստիկանության պետի 01.12.2021թ. թիվ 3892-Ա հրամանի, շաբաթական 4 օր (չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերին) իրենց ֆիզիկական պատրաստականության պարապմունքներն են անցկացնում ոստիկանության տարբեր ստորաբաժանումներից ամսվա հաշվարկով շուրջ 2300 ծառայողներ,իսկ <<Դինամո>> ՄՀԿ Շիրակի մասնաճյուղի մարզադահլիճներում՝ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության մոտ 500 ծառայողներ՝ շաբաթական 1 օր :

Համաձայն ՀՀ ոստիկանության պետի 01.12.2021թ. թիվ 3892-Ա հրամանով հաստատված սպորտային միջոցառումների անկացման 2022թ. օրացուցային պլանի (**Ծրագրի հավելված N 1**)՝ Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ-ն ՀՀ ոստիկանության շուրջ 900 ծառայողների մասնակցությամբ սպորտային միջոցառումների անցկացման համար նախապատրաստում ու տրամադրում է համապատասխան կահավորված, մասնագիտացված մարզադահլիճներ և խաղադահլիճ՝ հոգալով միջոցառումների անցկացման ժամանակահատվածում կոմունալ, սպասարկման և էներգետիկ (էլեկտրաէներգիա, ջեռուցում, տաք ջրամատակարարում) ծախսերը :

ՀՀ Կառավարության 23.01.2003թ. N 174-Ն որոշման 24-րդ կետի պահանջի և ՀՀ ոստիկանության պետի 01.12.2021թ. թիվ 3892-Ա հրամանի համաձայն՝ ՀՀ ոստիկանության ծառայողների ֆիզիկական պատրաստականության պարապմունքների արդյունքներն ամփոփելու նպատակով Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ-ն ՀՀ ոստիկանության շուրջ 2500 ծառայողներից տարեվերջյան դիֆերենցված ստուգարքների ընդունման համար ապահովում է համապատասխան մասնագիտացված մարզադահլիճներով, մարզահրապարակներով, վազքուղիով և կոմունալ պայմաններով՝

համաձայն ֆիզիկական պատրաստականության ստուգարքների հանձնման ժամանակացույցի: **(Ծրագրի հավելված N 2):**

Տարեվերջյան դիֆերենցված ստուգարքների ամփոփման ժամանակ լավագույն արդյունքներ ցուցաբերած ոստիկանության ստորաբաժանումներն ու ոստիկանները <<Դինամո>> ՄՀԿ կողմից պարգևատրվում են հուշանվերներով, գավաթներով, պատվոգրերով և այլ պարգևներով, միաժամանակ բարձր գնահատական ստացած ոստիկանների լուսանկարները փակցվում են <<Դինամո>> ՄՀԿ մարզահամալիրի ճեմասրահում պատրաստված պատվո տախտակին:

ՀՀ ոստիկանության Մարտական և ֆիզիկական պատրաստականության բաժինը իր ստեղծման իսկ օրից անվճար հիմունքներով զբաղեցնում է <<Դինամո>> ՄՀԿ 7 աշխատասենյակ, օգտվելով էներգետիկ (էլեկտրաէներգիա և ջեռուցում), կոմունալ, կապի (հեռախոս, ինտերնետ) և մարզահամալիրի սպասարկման ծառայություններից, և ՀՀ ոստիկանության ՄՖՊ բաժնի կողմից <<Դինամո>> ՄՀԿ մարզահամալիրում պարբերաբար անցկացվում են ուսումնամարզական հավաքներ ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների պատասխանատուների հետ :

Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ-ում տարբեր մարզաձևերից մշտապես անցկացվում են միջոցառումներ,առաջնություններ և հուշամրցաշարեր՝ նվիրված ՀՀ ոստիկանության օրվան,ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված ոստիկաններին : Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ բոլոր մասնաճյուղերի մարզադահլիճներում անվճար հիմունքներով մարզվում են նաև ՀՀ ոստիկանության վետերանները՝ համաձայն <<Հանրապետության ոստիկանության վետերանների խորհուրդ>> ՀԿ և Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ միջև կնքված հուշագրի :

Հայաստանի <<Դիանամո>> ՄՀԿ-ն առաջնահերթություն է համարում նաև հանրապետության ազգաբնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը, առողջ և ֆիզիկապես ամուր սերնդի պատրաստումը, զերծ պահելով նրանց արատավոր երևույթներից, որը հանդիսանում է նաև իրավախախտումների և հանցագործությունների նախականխման արդյունավետ միջոց :

4. Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներն ու մուտքերը

Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ-ին ՀՀ կառավարության կողմից, Պետբյուջեից, տրամադրվում է ՀՀ <<Կրթության,գիտության,մշակույթի և սպորտի>> նախարարության միջոցով դրամաշնորհ <<Արտադպրոցական դաստիարակություն>> ծրագրով, որը

բավարարում է միայն մարզչական կազմի և մարզահամալիրը սպասարկող անձնակազմի մի մասի աշխատանքի վարձատրությանը:

Մարզահամալիրի պահպանման ու շահագործման, կոմունալ սպասարկման, մարզական միջոցառումների կազմակերպման, կազմակերպության գոյատևման հետ կապված մյուս ծախսերը, ինչպես նաև էներգետիկ ծախսերի մի մասը իրականացվում է <<Դինամո>> ՄՀԿ գույքի վարձակալությունից ստացված մուտքերի հաշվին : Մարզահամալիրը սպասարկող անձնակազմի մյուս մասի աշխատանքի վարձատրության ու էներգետիկ ծախսերի մնացած մասը ակնկալվում է իրականացնել ՀՀ ոստիկանության միջոցով Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ տրամադրվող պետական դրամաշնորհի հաշվին:

5. Ծրագրի կատարման կարգն ու ժամկետներն

Ելնելով <<Դինամո>> ՄՀԿ գործունեության բնույթից ծրագրի կատարումը կրում է շարունակական բնույթ : Մարզահամալիրը տրամադրվում է ամբողջ տարի՝ հուլիս-օգոստոս ամիսների ամառային ընդմիջումով : <<Դինամո>> ՄՀԿ կողմից ծառայությունների մատուցումն ՀՀ ոստիկանության աշխատակիցներին ու նրանց ընտանիքի անդամներին իրականացվում է ողջ տարվա ընթացքում, բացի վերը նշված ամիսներից, իսկ ոստիկանության ստորաբաժանումների միջև անցկացվող մրցումների և առաջնությունների, ՀՀ ոստիկանության ՄՖՊ բաժնի կողմից անցկացվող ստուգարքների համար մարզահամալիրի տրամադրումը իրականացվում է ՀՀ ոստիկանության կողմից հաստատված ժամանակացույցի ու տարեկան օրացուցային պլանի համաձայն : Տարվա ընթացքում, որոշակի ժամկետով, ըմբշամարտի մասնագիտացված մարզադահլիճը ըմբշամարտի գորգով կահավորված տրամադրվում է ՀՀ ոստիկանության զորքերին մասնագիտական պարապմունքների անցկացման համար:

Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ՝

Նախագահի առաջին տեղակալ՝ Ա. Մկրտչյան

Նախագահի տեղակալ՝ Ս. Պողոսյան

<<31>> հունվար 2022թ.

ԾՐԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՔԱՂՎԱԾՔ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆԻՑ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԱ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ <<ԴԻՆԱՄՈ>> ՄՀԿ-ՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

N	Մարզաձև	ժամկետը	Օրերի քանակը	Յուրաքանչյուր թիմից	
				Մասնակից. քանակը	Ներկայաց. քանակը
1.	ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏ	16-18.02	3	3	1
2.	ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ	9-11.03	3	3	1
3.	ՎՈԼԵՅԲՈԼ	11-15.04	5	8	1
4.	ՄԻՆԻ ՖՈՒՏԲՈԼ	06-10.06	5	8	1
5.	ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԵՌԱՄԱՐՏ *	14-16.09	3	4	1
6.	ԸՄԲՇԱՄԱՐՏ ՍԱՄԲՈ	19-21.10	3	7	1

*** - Ծառայողական եռամարտի առաջնության միայն 100մ վազք վարժությունն է անցկացվում Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ-ում :**

Համաձայն ՀՀ ոստիկանության պետի 01.12.2021թ. թիվ 3892-Ա հրամանով հաստատված սպորտային միջոցառումների անկացման 2022թ. օրացուցային պլանի՝ Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ-ն ՀՀ ոստիկանության սպորտային միջոցառումների անցկացման համար նախապատրաստում ու տրամադրում է համապատասխան կահավորված, մասնագիտացված մարզադահլիճներ և խաղադահլիճ՝ հոգալով միջոցառումների անցկացման ժամանակահատվածում կոմունալ, սպասարկման և էներգետիկ (էլեկտրաէներգիա, ջեռուցում, տաք ջրամատակարարում) ծախսերը :

ԾՐԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ N 2

ՔԱՂՎԱԾՔ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻՑ

ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի, գլխավոր վարչությունների, վարչությունների և ինքնուրույն բաժինների, Երևան քաղաքի վարչության և նրան ենթակա ստորաբաժանումների անձնակազմի **ֆիզիկական պատրաստության ստուգարքների հանձման**

19.09 - 22.09	
ԻՎ ՀԿԼՎ Բուժ վարչություն Ինտերպոլի ԱԿԲ	10:00
ՏՎ ԳԳԱՌՎ ԻԿ	15:00
23.09 - 26.09	
ՓՔՎ Կապի և ՏՏ վարչություն ՆԱՎ	10:00
ԿՔՎ ՀԱԱԳՎ	15:00
28.09 – 29.09	
ՔՈԳՎ	10:00-12:00, 15:00-17:00
ԱՎՎ	15:00
30.09 – 03,04,05.10	
ճ.Ո	10:00
Շտաբ	15:00
01.10 – 08.10	
Ուղեկցող գումարտակ	10:00
ՄՖՊ բաժին	15:00
Ճ.Ո Երևանի ՀՔԲ	16:00
06,07.10 – 10,11,12,13,14.10 – 17,18,19,20,21.10	
Պարեկային ծառայություն, ՕԿԿ	10:00-12:00, 15:00-17:00

24,25,26,27.10	
ԵՔՎ Հատուկ նշանակության գումարտակ	10:00-12:00, 14:30-16:30
28.10 – 31.10	
Մետրոպոլիտենի բաժին	10:00
Եր. քաղ. վարչ	15:00
02.11 – 03.11	
ԶՊՎ	10:00
«Զվարթնոց» օ/կ գծ բաժին	11:30
Արաբկիրի բաժին	15:00
04.11 – 07.11	
Նոր-Նորքի բաժին	10:00
Կենտրոնականի բաժին	15:00
09.11 - 10.11	
Քանաքեռ- Զեյթունի բաժին	10:00
Մաշտոցի բաժին	11:30
Շենգավիթի բաժին	15:00
11.11 – 14.11	
Էրեբունու բաժին	10:00
Մալաթիայի բաժին	15:00